

Երկ կես գիշերին (Պեյրոսի ծանով) վերջ գտաւ Շիրիտայի երեք քառնթիւններու մէջ քուէներուն ձեռքով հաշուով պայմանաժամը: Փոխ նախագահ Ալ Կորի փաստաբար յայտարարեց, որ Կոր դատարան պիտի դիմէ երեք քառնթիւններուն մէջ վերջնական արդիւնքներուն վերատեսուքեան համար: Ըստ ոչ պաշտօնական արդիւնքներու, Պուշ 500 քուէով անցած է Կորի: Անենայնդէպս նոյնիսկ եթէ ձորձ Ուրբըր Պուշ շահի Շիրիտայի քուէները, Ալ Կորի փաստաբարները իրենց առարկութիւնները Գերագոյն Ատենակին պիտի ներկայացնեն Ուրբաթ օր: Հետեւաբար ամերիկացիք կրնան տակաւին քառնի մը օր եւս սպասել գիտնալու համար, թէ ով պիտի ըլլայ երկրին 43րդ նախագահը:

(ՌՈՅԹՐԸ)

### ԹԱԷՖԻ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԻՆ ՀԱՄԱԶԱՅՆ

## ՍՈՒՐԻԱ ԱՄԻՍՆԵՐ ԱՌԱՋ ՍԿԱԱԾ Է ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ԻՐ ՈՒԺԵՐՈՒՆ ՎԵՐԱԴԱՍԱԲՈՐՄԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՀԱՐԻՐԻ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի Շարաթ օր այցելեց Գահիրէ, ուր տեսակցութիւններ ունեցաւ Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաբի, վարչապետ Աթէֆ Օպէյտի եւ այլ պաշտօնատարներու հետ:



Հարիրի տեսակցեցաւ նախագահ Մուպարաբի հետ:

Տնտեսութեան եւ առեւտուրի նախարար Պասէլ Շըլէյհանի ընկերակցութեամբ Գահիրէի օդակայանին մէջ Հարիրի դիմաւորուեցաւ Օպէյտի նախարարներու եւ Եգիպտոսի մէջ Լիբանանի դեսպանին ու Լիբանանի մէջ Եգիպտոսի դեսպանին կողմէ:

Օդակայանին մէջ թղթակցներու հարցումներուն պատասխանելով, Հարիրի հաստատեց անհրաժեշտութիւնը՝ գարգացնելու երկու երկիրներուն միջեւ առեւտրական փոխանակումները: «Ասիական բնական շէ, մասնաւորապէս երկու երկիրներն ալ միջառաջարկութիւններով ներածուած կ'ընեն, եւ անոնց յարաբերութիւնները պատմականօրէն

սերտ են. հետեւաբար անհրաժեշտ է վերացնել երկու երկիրներուն մէջ գտնուող խոչընդոտները, որոնցմէ մէկը մաքսատուրքն է», ըսաւ Հարիրի: «Այս այցելութիւնը շարաթներէ ի վեր որոշուած է, եւ ուղղակի առնչութիւն չունի շրջանային զարգացումներուն հետ, բայց Եգիպտոսն ու անոր նախագահը շրջանային մեծ դեր ունին, իսկ շրջանային իրադարձութիւններու ընդթր անխուսա-

փելի կը դարձնէ անոնց արծարծումը», յայտնեց ան:

Եգիպտոսի վարչապետ Բարի զարուստ մարտնչեց Հարիրի եւ գոհունակութիւն յայտնեց երկու երկիրներու կապերուն ամրութեան համար: Ան նոյնպէս շեշտեց երկու երկիրներու տնտեսական գործակցութիւնն ու առեւտրական փոխանակումները զարգացնելու անհրաժեշտութիւնը:

Գահիրէի օդակայանի պատուով հիւրարարահին մէջ կարճատեւ դադարէ մը ետք, երկու վարչապետները «Անտալուս» պայտոսին մէջ գումարեցին ժողով մը, ապա անոնց միացան նախարար Ֆէյշահն եւ դեսպան Տիւմաշըիէ, ինչպէս նաեւ՝ Եգիպտոսի տնտեսութեան եւ արտաքին առեւտուրի նախարար Եուսէֆ Պուրրոս Ղալի, քարիզի նախարար Սաժէ Ֆահմի եւ Լիբանանի մէջ Եգիպտոսի դեսպան Ատէլ Խոտարի:

Շար.Ղ' Էջ 10

## ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԻՔԵՐ՝ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒ ԱՐԻՒՆԱՀԵՂՈՒԹԻՒՆԸ ԴԱԴՐԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Միջին Արեւելքի մէջ յարուածութիւնը մեղմացնելու դիւանագիտական ճիգերը շարաթաւեցնելու Եգիպտոս փոխարուեցան, ուր նախագահ Հիւսնի Մուպարաբ հանդիպումներ ունեցաւ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթի, Իսրայէլի վարչապետ Էհուտ Պարաշի խորհրդատու Տանի Եաթոմի եւ Յորդանանի Ապտալաթ Թապաուրիի հետ:

Մուպարաբ - Եաթոմ տեսակցութիւնը տեղի ունեցաւ երկ, հանդիպումի աւարտին սակայն, որեւէ յայտարարութիւն չկատարուեցաւ: Եաթոմի Գահիրէ այցելութիւնը ցոյց կու տայ, թէ Իսրայէլ կ'ուզէ հաստատ պահել կապերը Եգիպտոսի հետ, որ հրէական պետութեան հետ խաղաղութեան համաձայնագիր ստորագրած արաբական առաջին երկիրն է. Իսրայէլ կ'ուզէ ամուր պահել այդ կապերը, հակառակ անոր, որ Եգիպտոս տուն կանչած է Թէլ Աւիւի մէջ իր դեսպանը, իբրեւ բողոք պաղեստինցիներուն հանդէպ որդեգրուած բիրտ միջոցառումներուն դէմ:

Եգիպտոսի նախագահը Շարաթ օր ընդունած էր այցելութիւնը Արաֆաթի, որ կը վերադառնար Ռուսիա այցելութենէն: Արաֆաթ Մուպարաբի վեկուցեց նախագահ Վլատիմիր Փութինի հետ ունեցած տեսակցութեան մասին: Պաղեստինցիները կ'ուզեն, որ Ռուսիա քաղաքական աւելի գործօն դերակատարութիւն ունենայ Միջին Արեւելքի մէջ, նկատի ունենալով, որ Միացեալ Նահանգներու կողմէ կը հովանաւորէ խաղաղութեան գործընթացը: Պաղեստինցիները Մուպարաբի դերակատարութիւնը կը պահանջեն հակազդի տակ առնելու համար ամերիկեանը, որ ի նպաստ Իսրայէլի կը նկատուի:

Եաթոմի այցելութենէն ետք, Մուպարաբ տեսակցութիւն ունեցաւ Յորդանանի Ապտալաթ Թապաուրիի հետ: Երկու ղեկավարները խորհրդակցեցան տիրող կացութեան եւ վայն բարելաւելու կարելիութիւններուն մասին:

### ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԱՆԱՏԱՅԻ ԴԵՄՊԱՆԸ

Ուրբաթ առաւօտ, 24 Նոյեմբերին, Արաս Ա. կաթողիկոս ընդունեց այցելութիւնը Լիբանանի մէջ Քանաթայի դեսպան Հայկ Սարաֆեանի:

Շուրջ մէկ ժամ տեւող խօսակցութեան նիւթ դարձան վեհափառի տուած հովուապետական այցելութիւնը Քանաթայի թեմին, ինչպէս նաեւ Լիբանանի եւ Միջին Արեւելքի ներկայ իրավիճակը:

Նոյն օրը Արաս Ա. կաթողիկոսին այցելեցին նաեւ Ղպտի եւ Ասորի Ուղղափառ եկեղեցիներուն հոգեւոր պետներուն ներկայացուցիչները, որոնք Անթիլիաս կը գտնուէին մասնակցելու համար Միջին Արեւելքի Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու Գործադիր Վարչութեան ժողովին:

TROISIEME SESSION! - RESULTATS ??? ANNEE SCOLAIRE RATEE ??!

ACADEMIE SOTHYS D'ESTHETIQUE ELYSAR

SUIVEZ NOTRE PROGRAMME D'ESTHETIQUE / COSMETIQUE SPECIALEMENT CONÇU POUR VOUS

INSCRIPTION : JUSQU'AU 30/11/00 - TEL: 03 ET OU 04 414079

DIPLOME D'ETAT

### ԴՐԱՄԱՀԱՒԱՔԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի թելեթոն-դրամահաւաքի արշաւը, կազմակերպուած Արցախի հիւսիս-հարաւ ճանապարհին կառուցապատման եւ Աղէտի Գօտիի վերակառուցման աշխատանքներուն համար, մեծ յաջողութեամբ տեղի ունեցաւ Հինգշաբթի, 23 Նոյեմբեր 2000ին, Մ. Նահանգներու եւ Եւրոպայի մէջ: Նոյն նպատակին համար Հիմնադրամի Լիբանանի Յանձնաժողովի կազմակերպած արշաւը, նոյն օրու մէջ, ընթացաւ յաջողութեամբ, եւ պիտի շարունակուի մինչեւ Շարաթ, 2 Գեկտեմբեր 2000:

- Դրամահաւաքի կեդրոններն են.-
- 1.- Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետ. Եկեղեցիներու Կեդրոն, Մար Մելայիլի - օթոպիւսի կայանին դիմաց:
  - 2.- Համապայմանի գրախանութ, «Շաղվոյ-եան» Կեդրոն:
  - 3.- «Տեմիրճեան» Կեդրոն, Նազգալ:

### ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՆԵՐՍԷՍ-ՊԵՏՐՈՍ ԺԹ. ՊԱՏՐԻԱՐԹԻՆ ԵՒ ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՅԵՏ

Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն եւ Մ.Գ.Հ.Կ. Լիբանանի Երջանի Վարիչ Մարմինը ներկայացնող միացեալ պատուիրակութիւն մը Շարաթ, 25 Նոյեմբեր 2000ի առաւօտեան ժամը 11:00ին, այցելութիւն մը տուաւ հայ կաթողիկէ համայնքի հոգեւոր տիրոջ՝ Ներսէս-Պետրոս ԺԹ. պատրիարքին:

Հանդիպման առանցքը հանդիսացան լիբանանահայ գաղութի վերաբերող խնդիրներն ու լիբանանահայ համայնքի իրաւունքներու պահպանման հարցը:

Ապա, պատուիրակութիւնը ուղղուեցաւ Անթիլիասի մայրավանք, ուր հանդիպում մը ունեցաւ Արաս Ա. կաթողիկոսին հետ:

Վեհափառին հետ խօսակցութիւնները կեդրոնացան լիբանանահայութեան ներապգային թէ արտաքին քաղաքական հարցերու վրայ: Ապա, արծարծուեցաւ Լիբանանի նորակազմ երեսնամեայ կառավարութեան մէջ շրջ հայ նախարարի մը բացակայութեամբ տեղի ունեցած համայնքի իրաւունքի անտեսման հարցը: Եշտուեցաւ սկզբունքային այդ իրաւունքը վերականգնելու վճռական մտտեցումը:

Ս.Գ.Հ.Կ. ՏԵՂԵԿԱՏՈՒ ԴԻՒԱՆ Հ.Յ.Դ. ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿ

### ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՐԱԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԱՌԻՈՒՎ ԲԱՐՁՐ ԸՈՎԱՆԱԲՈՐՈՒԹԵԱՄԲ ԸԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԶՕՐ. ԵՄԻԼ ԼԱՇՈՒՏԻ

### ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԸ

Կը հրաւիրէ ձեզ պաշտօնական համոզութեամբ մը, որ տեղի պիտի ունենայ այսօր՝ Երկուշաբթի, 27 Նոյեմբեր 2000, կեսօրուան ժամը 12:00ին, UNESCOի պալատին մէջ:

Համոզութեան իրենց մասնակցութիւնը կը բերեն հայ համայնքի բոլոր վարձարաններու միջնակարգի եւ երկրորդականի աշակերտները: **ՅԱՆՕԹ.** Յատուկ օթոպիւսներ պիտի տրամադրուին, ժողովուրդը փոխադրելու համար ձեռնարկին վայրը, առաւօտեան ժամը 10:30էն սկսեալ, «Ճաղոցեան» կեդրոնի կից կառուած մէջ (Պուրճ Ճամուտ, «Մասքըր Սոլ»ի դիմաց):



Պաղեստինցի անցորդներու Եկատմամբ անմարդկային վերաբերում: Միւս կողմէ, իսրայէլեան աղբիւրներ յայտնէ Շար.Ղ' Էջ 10

### ՔՈՉԱՐԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԵԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի նախագահ Ռուպերթ Քոչարեան Շարաթ օր ընդունեց Միջին Արեւելքի միաբանութեան 300ամեակին տօնակատարութեան մասնակցելու նպատակով Հայաստան գտնուող Միջին Արեւելքի միաբանութեան պատուիրակութիւնը՝ ընդհանրական աբբախար Եղիա վրդ. Քիլաղ պեանի գլխավորութեամբ:

Նախագահ Քոչարեան գնահատեց Միջին Արեւելքի միաբանութեան գործունեութիւնը եւ անոնց վաստակը հայագիտութեան զարգացման, համաւարդկային մեր արժեքներու պահպանման եւ հարստացման մէջ: Ան նշեց, որ հոգեւոր, մշակութային մեր արժեքները պայքարի դերակատարութիւն ունին համաշխարհային քաղաքակրթութեան զարգացման մէջ եւ կարելիութիւն կը ստեղծեն արժանավայել կերպով աշխարհին ներկայանալու համար:

(ՄՐԸՆԹՐԸ)

ՄԱՍՈՒԼԻՆՍԱԿ

«ԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՐ»

ՀԱՅԱՎՈՐ ԹԱՂԵՐՈՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ 25ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒՐՈՒԹԱԾ «ԱԶԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

### ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՐ

Պատմական - վկայական Բնութի գիրք մը, որ կը ներկայացնէ 1975-1990 լիբանանահայութեան ինքնապաշտպանութեան անօրեան իր զանազան երեսներով: 416 էջ, 11 գլուխ:

- Ազգային եւ քաղաքական փորձառութիւններ
- Արժեւորումներ
- Պատմութեան համար
- Վկայութիւններ եւ վերլուծումներ
- Ուղեւոր կը լինենք...
- Յիշատակելիները
- Զ. Յ. Դ. եւ հայութեան դէմ ոճիրներ
- Հայրենական արձագանգներ
- Միջին Արեւելքի արձագանգներ
- Հին օրերու վկայութիւններ նոր օրերու համար
- Թիկունքի աշխատանքները

# ՀԱՐԱԻ ԿՈՂԸ ԱՆՍԱԿԱՐԿԵԼԻ Է

Կ'ԸՍԵ ԼԱՀՈՒՏ

Նախագահ զոր. Էմիլ Լահուտնկատել տուաւ, որ Լիբանան, որուն մասին անցնալին կ'ըսուէր, թէ իր ուժը իր ակարողութենէն է, այսօր ուժեղ է իր միտքեամբ, ամուրձ իր արդար կեցուածքներով, զօրակցական կեցուածք որդեգրած է արդար, ամբողջական եւ վերջնական խաղաղութեան համար գործող եղբայր ու բարեկամ պետութիւններուն հետ, մանաւանդ որ նման խաղաղութիւն մը իսկական միակ երաշխիքն է միջազգային ընտանիքին ցանկացած խաղաղութեան Միջին Արեւելքի մէջ:

Նախագահ Լահուտ կողմնակից արտերկրի լիբանանցիներուն ու լիբանանեան ծագում ունեցող օտարահայտակներուն՝ մասնակցելու Լիբանանի տնտեսական կեանքի կազմակերպման, ուղղակի ներդրումներ կատարելով Լիբանանի մէջ:

Նախագահ Լահուտի այս կողմ կարողացուեցաւ արտերկրի մէջ Լիբանանի դեպատմաններուն ու լիբանանեան միտքեակներուն կազմակերպած Անկախութեան տօնի հանդիսութիւններուն ընթացքին:

Շար.ը՝ էջ 10

## «ԿՐԱԿ ԿԸ ԲԱՅՈՒԻ ՆԱԽԱԶԵՆՈՒԹԵԱՆՍ ԿՐԱՅ»

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրըրի երկ կայունաց, որ Պրըրի գացած է «սուրիացի եղբայրներուն հետ համակարգումով, եթէ «կրակ կը բացուի» իր նախաձեռնութեան վրայ:

Պրըրի ըսաւ. «Նախաձեռնութեան նպատակը ներքին հրդեհը մարելն է: Կար լիբանանեան մարմինը ցայտնի պատրուի մը, քոր փորձեցի մարել, եւ սուրիացի եղբայրներուն հետ համակարգումով ձեռք բերել Պրըրի: Յանկարծ, քրանսական լրատու գործակալութեան քիչ քանակները յաջողեցաւ այցելել Սֆէյր պատրիարքին եւ անկէ ստանալ վրոյց մը, որ կը խօսուի տիրապետութեան մասին, ցաւօք, լիբանանեան լրատու գործակալութիւն մըն ալ այս յայտարարութիւնը ցրուեց: Ասիկա նախաձեռնութեան վրայ կրակ բանալ է»:

Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէի յայտարարութեան մասին՝ Պրըրի ըսաւ, որ ան դաւաճութիւն մը կու տար, եւ այդ դաւաճութիւնը կրնայ ինչ ըլլալ, «ամէն պարագայի հոն նախաձեռնութեան մասին ծրարական քան չ'ըսուի, մասնաւորապէս ինչ որ ան ընդգծած է լիբանանեան ու սուրիական ղեկավարութեանը դէմը»:

Պրըրի նաեւ գոհունակութիւն յայտնեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի Շարքօ օր Գահիրէի մէջ կատարած յայտարարութիւններուն համար, ըսելով, որ անոնք զուսէր ան զրակալ են»:

Նշեալք, որ սուրիական պատկերապիտի կայանը Շարքօ գիշեր սիտած էր նախարար Շարէի տուած դասախօսութիւն մը, որ կ'ըսուէր, թէ Սուրիա ոչ մէկ ճնշումով կ'ընդունի թափաքի համաձայնագրի իրաւունքը: Սուրիական դիւանագիտութեան պետը նաեւ ըսաւ, որ Լիբանան գտնուող սուրիական ուժերու վերադասարանումին շուրջ կը համաձայնի երկու երկիրներու կառավարութիւնները, եւ ոչ մէկ երրորդ կողմ գործ ունի այս հարցին մէջ»:

## ՄԱՀԱԶԴ

Տիկին Նորա Ստամպուլեան  
Տէր եւ տիկին Յարութեան Ստամպուլեան  
եւ զաւակունք

Տիկին Լիզա Ստամպուլեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Արամ Պոյաճեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Աւետիս Ստամպուլեան  
Տիկին Մարի Տէր Պետրոսեան եւ զաւակունք  
Օրդ. Սոնիկ Ստամպուլեան  
եւ համայն ազգականներ կը գովեն իրենց ամուսնոյն,  
եղբոր եւ հարազատին:

### ԱՐՍԷՆ ՍՏԱՄՊՈՒԼԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շարքօ, 25 Նոյեմբեր 2000, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Կիրակի, 26 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրոն Շրպէի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:  
● Յուսակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Տորա, Երկուշաբթի 27, Երեքշաբթի 28 եւ Չորեքշաբթի 29 Նոյեմբերին:

## ՄԱՀԱԶԴ

Տիկին Մարի Սալիանեան  
Տէր եւ տիկին Կարապետ Սալիանեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Գրիգոր Սալիանեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Ժան Սալիանեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Յակոբ Սալիանեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Նիկոլ Սալիանեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Արրահամ Քերոբեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Յովհաննէս Հայրապետեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Մկրտիչ Հայրապետեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Կարապետ Քիչեճեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Ժաք Մանուսեան եւ զաւակունք  
եւ համայն ազգականներ կը գովեն իրենց ամուսնոյն,  
հոր, մեծ հոր, եղբոր եւ հարազատին:

### ԱՐՇԱԿ ՍԱԼՄԱՆԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 22 Նոյեմբեր 2000, երկկուսեան ժամը 7:00ին, իր բնակարանին մէջ:

Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Հինգշաբթի, 23 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:  
● Յուսակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին զաւակին Կարապետ Սալիանեանի բնակարանը, Ռապուէ, «Սարիայ» հիւանդանոցի փողոց, «Ղազար» շէնք, Ուրբաթ 24, Շաբաթ 25 եւ Կիրակի 26 Նոյեմբերին:  
● Կր խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւն կատարել Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին:

# ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԸՐԵՏԱՆԻՆ ՈՒՐԱԿՈՑԵՑ ՄԱԶԱՐԷՇ ԶԵՊԱԱՆ ԼԻԲԱՆԱՆ ԲՈՂՈՔ ՊԻՏԻ ՆԵՐԿԱՅԱՅՆԷ ՄԱԿԻ

Իսրայէլեան բանակի հարաւային Լիբանանէն Մայիսին կատարած հեռացումէն ետք առաջին անգամ ըլլալով իսրայէլեան օդուժն ու հրետանին երէկ ուժերակոծեցին Մազարէշ Երզրան ու անոր մերձակայ սահմանային շրջանները: Վերաւորուեցաւ քաղաքային մը եւ արձանագրուեցան նիւթական վնասներ:

Նախագահ իսրայէլեան դիմադրութիւնը ականահարումով մը սպաննած էր իսրայէլացի զինուոր մը եւ վիրաւորած՝ երեք ուրիշներ:

Արդարեւ, իսրայէլեան օդուժը երէկ յարձակում մը գործեց Մազարէշ Երզրանի մէջ, Քֆարշուպա գիւղի մերձակայ մէջ Երուրին վրայ, անոր վրայ արձակելով երկու հրթիռ: Իսրայէլեան հրետանին 90 ուղւմը արձակեց Քֆարշուպայի շրջակայքին վրայ, վիրաւորելով Ահմէտ Ֆայէզ Հիւսէյնը:

Կարգ մը լրատուական աղբիւրներ հաղորդեցին, որ իսրայէլեան օդուժը կատարած է բազմաթիւ յարձակումներ, ինչպէս Տուէյրի, ինչպէս Շարքօյի եւ Քֆարշուպայի շրջանները: Իսրայէլեան հրետանին արձակած հրթիռ ուղւմերուն առաջացուցած հրդեհը փճացուցած է Քֆարշուպայի հարաւը գտնուող ձիթեղնեղջերու եւ անտառային մեծ տարածութիւն, ըսին նոյն աղբիւրները, աւելցնելով, որ իսրայէլեան օդանւերը կէսօրին թռիչքներ կատարեցին արեւմտեան Պեքալի վերեւ:

### ԳՐԱԿՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Իսլամական դիմադրութիւնը երէկ հաղորդագրութեամբ մը յայտարարեց, որ իր «Աքսայի Նահատակներ» ջոկատը

Կիրակի առաւօտեան ժամը 6:30ին զօրաւոր ակն մը պայթեցուցած է իսրայէլեան շրջուն ջոկատի մը մօտ, Ռամթա - Սրմաքա ճամբուն վրայ, Մազարէշ Երզրանի ներքո:

Հաղորդագրութիւնը հաւաստեց, որ իսլամական ջոկատը իսրայէլեան զինուորի վրայ շարունակէ հարուածել թշնամին մինչեւ որ ազատագրուի հայրենի հողի ամբողջութիւնը:

### ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԶԱՅՆԱՍՓԻՈՒ ԶԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Իսրայէլի պետական ձայնասփիւռի կայանը յայտարարեց, թէ իսրայէլացի երեք զինուորներ վիրաւորուած են երէկ առաւօտ Մազարէշ Երզրանի մէջ ակնի մը պայթումին պատճառով: «Ուժեղ ակնի մը պայթում պատահած է շրջուն ջոկատի մը Լիբանանի հետ սահմանին մօտ վայրէ մը անցած ատեն, վիրաւորուած են անոր անդամներէն ոմանք, եւ ուղղաթիւններով փոխադրուած են հիւանդանոցներ, ըսաւ կայանը, հաստատելով, որ իսրայէլեան հրետանին ուժեր կոծած է ականահարումի վայրի շրջակայքը:

### ԶՈՒՍ ԵՒ ԵՐԵ ԿԻՐԱԿՈՐ

Միջազգային լրատու գործակալութիւնները պահանջութեան աղբիւրներէ քաղելով իրենց տեղեկութիւնները, հաղորդեցին, որ «ականահարում մը պատճառով է իսրայէլացի զոհ մը եւ երեք վիրաւորներ»:

### ՊԱՐԱՔ

Իսրայէլի վարչապետ Էհուտ Պարաք յայտարարեց, որ կացութիւնը շատ զգայուն է իսրայէլի հիւսիսային սահմանին վրայ:

Եւ ընդհանուր վիճակը կրնայ որեւէ ատեն վատթարանալ: Հետեւաբար անհրաժեշտ է ուժեղ լրաց խելացի հակահարուած տալ, առանց արկածախնդրութեան երթալու:

### ՊԸՆ ԱՄԻ

Իսրայէլի արտաքին գործոց նախարարի պաշտօնակատար Շլոմօ Պրն Ամիրաւ, որ այս ականահարումը շատ վտանգաւոր արարք մըն է, մանաւանդ որ իսրայէլի իր բանակը Լիբանանէն հեռացուցած է Մայիսին:

Շար.ը՝ էջ 10

## Կ'ՈՒԶՈՒԻ

● Ծախող երիտասարդ օրիորդ մը, հաստատութեան մը համար, Արաքս շուկայի մէջ: Հեռ. 01-266462:

### ՅՈՎԻԿ Յ. ԻՍՎԷԼԵԱՆ

Ընդ ԱՆԻ ԱՊԱՃԵԱՆ Ամուսնացեալը

25 Նոյեմբեր 2000  
Հալէպ

### ԲԱՆՏԱԴՐՈՒՄՕ

Ըլի եւ Թերէյ Սարգիսեան Բախտարուած են առջինեկ աղջիկ պաւակով մը՝

### ՎԱՆԱ

25 Նոյեմբեր 2000  
Հեռ. 08-620662

### ՇՆՈՐԴԱԿԱԼԻՔ

● Գոհար Մուշեղեան շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով եւ նուիրատուութեամբ մասնակից եղան իր եղբոր՝ ՌՈՒԲԷՆ ՄՈՒՇԵՂԵԱՆԻ մահուան սուգին:

### ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Ժաք Վէքիլեանի մահուան ժ. տարելիցին առիթով, արն. Յակոբ Մկրտիչեան 50 տոլար՝ ԼՕՍԻ «Արաքսի Պուլլուրճեան» ընկերաբժշկական կեդրոնին:

### ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Ժաք Վէքիլեանի մահուան 12րդ տարելիցին առիթով, տէր եւ տիկին Յակոբ Մկրտիչեան 100 տոլար եւ տէր եւ տիկին Պետրոս Վէքիլեան 100,000 լ. ռ.՝ ՔԱՀԼԻ Ծերանոցին:

### STUDIO Lantern

● Կը ստանճնէ ուրախ առիթներու video նկարահանումներ  
Հեռ. 01-266866  
Ել 03-695399

### ԾԱԽՈՒ ԶԱՐԿԱԲԱԺԻՆ

● Ամանոսի շրջանի մէջ, 2 Գնչուցեակ եւ հիւրասենեակ, օժտուած էր ընտրասիւնով, հեռաձայնի գծով: Դիմել՝ հեռ. 03-885123:

# ՄԻԶԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՒՂԱՓՈԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԺՈՂՈՎ

Ուրբաթ, 24 Նոյեմբեր 2000, Պէյրութի մէջ, գումարուեցաւ Միջին Արեւելքի Արեւելեան Ուղղափառ Եկեղեցւորներու հոգեւոր պետերու, Ղապի Եկեղեցւոր Շնուտա Գ. պապի, Ասորի Եկեղեցւոր Չաքքա Ա. պատրիարքի եւ Արամ Ա. կաթողիկոսի նշանակած մասնաւոր յանձնախումբին ժողովը: Ժողովին մասնակցեցան Պիշոյ արքեպիսկոպոս, Կրեկորիոս Ետաննա Խարսիս արքեպիսկոպոս, Քեդիֆիոս Ճորճ Սալիպա արքեպիսկոպոս, Սեպուհ Եպ. Սարգիսեան եւ Նարեկ Ծ. վր. Ալեքսէյեան:

Ժողովը քննարկեց հետեւեալ կետերը.  
1.- Միջին Արեւելքի հոգեւոր պետերու Միջին Արեւելքի եկեղեցւորներու խորհուրդին յղած յանձնարարութիւնները:

2.- Ուղղափառ եկեղեցիներու Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին ներս մասնակցութեան մասնաւոր յանձնախումբի արձանագրած պարագանները:

3.- Միջին Արեւելքի Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու եւ Ռուս Ուղղափառ, Հռոմի Կաթողիկ, Անկիթան եւ Բարեկարգեալ եկեղեցիներու հետ սառուածաբանական պաշտօնական երկխօսութիւնները:

4.- Միջին Արեւելքի Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու երիտասարդաց միութեան, միջոցառումներէն յարաբերութիւններու եւ հրատարակչական համատեղ ծրագիրներու մշակման ենթախանութիւններու գործունէութիւնը:

5.- Քրիստոնէութեան Հայաստանի մէջ պետական կրօն հռչակման 1700ամեակի տօնակատարութիւններու պատկումը՝ Անթիլիասի մէջ:

6.- Միջին Արեւելքի Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու կրօնական գրականութեան փոխանակման գործընթացը:

Միջին Արեւելքի հոգեւոր պետերու Գ. հանդիպումը եւ պայն կանխող մնայուն յանձնախումբի ժողովը տեղի պիտի ունենայ Գահիրէի մէջ, 13էն 17 Մարտ 2001ին:

## ՊԸՐԻԻ ԶԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՅՈՅՍ ԿԸ ՆԵՐՇԵԶԷ

Կ'ԸՍԵ ՍՖԷՅՐ

Մարտինեան Սֆէյր պատրիարքը երէկուան իր քարոզի մէջ նկատել տուաւ, որ լիբանանեան պետութեան երկրորդ անձնաւորութեան (խորհրդարանի նախագահ Նեպիի Պրըրի) տուած ազգային խոստումները, Պրըրիէն կատարած յայտարարութիւնը յոյս կը ներշնչէ, թէ իր ըսածը պիտի իրականանայ եւ բարեբար անդրադարձներ պիտի ունենայ թէ՛ Լիբանանի եւ թէ՛ Սուրիոյ վրայ, ամբապնդելով անոնց յարաբերութիւնը, որ պէտք է ըլլալ անկեղծ, առողջ եւ եղբայրական:

Սֆէյր պատրիարքէն ետք ընդունեց իր կեցուածքներուն զօրակցութիւն յայտնող անձնաւորութիւնները, եւ անոնց ըսաւ, որ ինք կ'արտայայտէ մարդոց զգացումները: «Մենք արարներ ենք եւ պէտք է հաղորդական մնանք մեր միջավայրին ու շրջակային հետ: Բայց մենք նաեւ քրիստոնէներ ենք եւ Լիբանանի իւրաքանչիւր իր բազմաթիւ համայնքներու պոյութիւնն է եւ գործակցութիւնը՝ ի շահ հայրենիքին», ըսաւ ան:

## ՀԱՅ ԱՐԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔՈԼԷԴ

Նախագահութեամբ՝  
Լիբանանի Հանրապետութեան  
Առաջին Տիպոյ  
**ՏԻԿԻՆ ԱՆՏՐԷ ԼԱՇՈՒՏԻ**

## ԵՐԳԱՀԱՆԴԵՍ ԿԻԳԵՆ ԴԱՐԲԻՆԵԱՆԻ

Դաշնակի ընկերակցութեամբ  
ՓԱԹՐԻՍ ՓԷՐԻԷՐԱՍԻ

Շաբաթ, 2 Ղեկտեմբեր 2000, երեկոյեան ժամը 8:00ին, Պէյրութի Ամերիկեան համալսարանի «Էսեմպլի Կոլ»-ին մէջ:

Տնօնը կարելի է ապահովել  
- Դպրոցի գրասենեակէն, հեռ. եւ ֆաքս 01-349816:  
- «Գարին» հաստատութենէն. Պուրճ Համուտ, հեռ. 01-266414:  
- Սիբի Սթըյընըրիէն, Չալքա:  
- Կը խնդրուի տոմսերը նախօրոք ապահովել:  
● Սրահին դռները պիտի փակուին ձիջ ժամը 8:00ին:

## THE CULTURAL HOUR

@  
HAIGAZIAN UNIVERSITY

invites you to a lecture on

Oral History, Displacement and Identity: The Armenian and Palestinian Cases

By

DR. ROSEMARY SAYEGH (Anthropologist)

Thursday November 30, 2000 – 7:00 p.m.

Haigazian University Auditorium – Kantari

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԶԱՆԱՅԻՆ ԿԱՐԶՈՒԹԻՒՆ ԳՐԱԿԱՆ - ԳԵՂԱՐՈՒԹԵՍԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

ՄԱՏՈՒՅՈՒՄ՝ ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՅԵԱՆԻ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ - ՎԷՆԱՆԻ ԱՆՏԱՌԸ

● ՍԱՅԻԿՆԵՐ ԵՒ ԵՐԱԾՇՏՈՒԹԻՒՆ

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 29 Նոյեմբեր 2000, երեկոյեան ժամը



# «Լինսի» Հիմնադրամը 165 Միլիոն Տոկոսով Ծրագրերի Պիտի Իրագործիչ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Երեքշաբթի, 21 Նոյեմբերին, Հայաստանի արտաքին գործոց նախարարությունը հաղորդագրություն է հրատարակել «Լինսի» հիմնադրամին կողմից 165 միլիոն տոկոս արժողութեամբ ծրագրերն ընդունված մասնակցությունները:

Հաղորդագրությունը կ'ըստ, թե Հայաստանի կառավարությունը եւ «Լինսի» հիմնադրամը նույն օրը ստորագրած են «փոխըմբռնման յուշագիր» մը, ուր կարգադրուած են Հայաստանի տնտեսական զարգացման ուղղուած «Լինսի» հիմնադրամի մեծագուժար ներդրման վերափոխումները:

Յուժնիսին Ուշաքիկի մէջ նախագահ Ռոպէրթ Քոչարեանի հետ ունեցած հանդիպումին ընթացքին Քոչարեանը բերեց յայտարարութեամբ ընդունած էր Հայաստանի կառավարութեան առաջարկը՝ օժանդակութիւն տրամադրելու տնտեսութեան այն մարզերուն, որոնք բազմապատկելի ազդեցութիւն կ'ունենան եւ աւելի բարձր տնտեսական աճի կը յանգեցնեն: Յաջորդող ամիսներուն կառավարութիւնը մանրամասն քննարկումները լաւագոյնս օգտագործելու եղանակը:

Հայաստանի կառավարութիւնը առանձնացուցած է վեց ծրագրեր, որոնք մտնեն արագ արդիւնքը պիտի պահանջեն:

1.- Վարկեր տրամադրել Հայրենի գործատէրերուն՝ գործազուրկներուն եւ ոչ մասնագէտ բանուորներուն աշխատանք հայթայթելու համար: Նմանապէս վարկեր եւ մասնաբաժնային ներդրումներ տրամադրել արտասահմանեան մեծ ընկերութիւններուն՝ խրախուսելու համար անոնց գործունէութեան ծաւալումը Հայաստանի մէջ, բնակչութեան համար աշխատատեղիներ ստեղծելու նպատակով:

2.- Աւարտել երկրաշարժի գոտիին մէջ լրացուցիչ բնակարաններու շինարարութիւնը, որուն խիստ կարեւր կը զգացուի:

3.- Մրցարկով, կառուցել եւ բարելաւել Հայաստանի ներքին ճամբաներու ցանցը: Այս պիտի օժանդակէ մարդոց եւ ապրանքներու ազատ հոսքին, ինչպէս նաեւ ներքին զբօսաշրջութեան:

4.- Վերանորոգել եւ վերականգնել աւելի քան երկու տասնեակ պատմական եւ մշակութային հաստատութիւններ՝ մատակարարելով, Օփերայի թատրոնի, թատրոնները, տուն-թանգարանները արդիւնատի եւ պատմութեան թանգարանները: Այս ազգային հարստութիւնները պիտի հրապուրեն ներքին եւ օտար զբօսաշրջիկները:

5.- Ներդրումներ կատարել նոր պանդոկներու եւ զբօսաշրջութեան առնչուող այլ ենթակառուցներու կառուցման գործին մէջ, ներառեալ Երեւանի Զուարթնոց օդակայանի վերակառուցումը եւ ընդարձակումը: Աճող զբօսաշրջութիւնը յաւելեալ տարողութիւն պահանջուած ուղղակի միջոց է, յատկապէս այն առումով, որ կը պահանջէ համեստ զրամագումարներ ներդրում եւ մարդոց աշխատանք կը հայթայթէ կարճատեւ վերապատրաստումէ ետք:

6.- Բարեկարգել եւ բարելաւել Երեւանի կեդրոնը: Քաղաքաշինական այս ծրագիրը կ'ընդգրկէ Թամանեանի «Հիւսիսային» ճանապարհի կառուցումը մայրաքաղաքին մէջ, որ պիտի վերածուի հետիոտն զբօսապայլի՝ գեղեցիկ լուսաւորութեամբ եւ կանաչապատումով, վաճառատուններով եւ սպասարկման վայրերով, ինչպէս նաեւ՝ զբօսանկային եւ բնակելի տարածքներով:

Հայաստանի քաղաքացիներուն համար վարկերու եւ ճանապարհներու շինութեան նպատակով զրամաշրջաններու տրամադրումը անմիջապէս կարելի է իրականացնել: Միւս ծրագրերը պիտի սկսին, անմիջապէս որ «Լինսի» հիմնադրամը Միացեալ Նահանգներու կառավարութեան հարկային արտօնութիւն ստանայ:

Հաղորդագրութիւնը կ'ընդգրկէ «այս ծրագրերը զարգացնելու համար տնտեսութեան տարբեր ճիւղերուն համար ինքնին պիտի հանդիսանան: Այս միայն սկիզբն է Հայաստանի կառավարութեան շարունակական ջանքերուն» օգտագործելու Հայաստանի աշխատութեւր եւ պատմական հարստութիւնները զբօսաշրջիկներն ու գործարարները դէպք Հայաստան ներգաւազելու համար: «Լինսի» հիմնադրամի բարեփոխական ներդրումը կ'ընայ սկզբնապարհ դառնալ տնտեսութեան վերականգնման եւ յուսալի ապագային համար»:

# ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ՄԸ ՄԷԿ ՄԻԼԻՈՆ ԿԸ ՆՈՒԻՐԷ ՀԱՄԱՆԵՄԱՐՈՒՄՆԵՐ Բ. ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԳԱՅԻՆ ՅՈՒՇԱԿՈՒԹՈՂԻՆ

Վերջերս Միացեալ Նահանգներու Փենսիլվանիա նահանգի Փայլթը Թաուն-շիփի բնակիչներէն Սարգիս Ակոբեան մէկ միլիոն տոկոսով նուիրատուութիւն կատարած է Ուշաքիկի մէջ Համաշխարհային Բ. պատերազմի Ազգային յուշակոթողի շինութեան: Յուշակոթողին շինութիւնը հովանաւորող յանձնախումբը նախագահն է 1996ին Միացեալ Նահանգներու նախագահական ընտրութեան հանրապետական թեկնածու Պոպ Տոլ, որ յայտարարած է, թէ յուշակոթողին յիշեալ նուիրատուութիւնը ցարկ հաւաքուած 90 միլիոն տոկոսին մաս կազմող մէկն է մեծ անհատական նուիրատուութիւնն է:



Պոլ Քլիմբըն եւ Պոպ Տոլ իմնադրութեան արարողութեան ընթացքին

Խուժքին կողմէ կազմակերպուած յուշակոթողի հիմնարկէքի արարողութեան ընթացքին խօսք առած է Միացեալ Նահանգներու նախագահ Պիլ Բիլքլինթը, որ իր խօսքին մէջ զրուատած է Միացեալ Նահանգներու նկատմամբ ամերիկահայ Սարգիս Ակոբեանի երախտագիտութիւնը, որ արտաստուած է յուշակոթողին կատարուած մէկ միլիոն տոկոսով նուիրատուութեամբ:

## ԱՐԺԱՆԹԻՆԻ ԱՐՄԵՆԻԱ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻ ԱՐԺԱՆԹԻՆԻ ԾԵՐԱԿՈՅՏԻ ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ ԺԱՍՆԱԿԱՒՈՐ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Արժանթինի ծերակոյտին ժամանակաւոր նախագահ նշանակուած է Մարիո Լոսատա, որ Արժանթինի պաշտօնական շրջանակներուն մէջ ճանչցուած է իր հայանը պատ գործունէութեամբ:

Այս առիթով, 20 Նոյեմբերին Արժանթինի մէջ Հայաստանի դեսպանութեան մասնակցութեամբ «Արմենիա» մշակութային ընկերակցութեան կեդրոնին մէջ տեղի ունեցած է յատուկ ընդունելութիւն մը, ի պատիւ Մարիո Լոսատայի:

Հարկ է նշել, որ Արժանթինեան սահմանադրութեան համաձայն, նկատի առնելով 6 Հոկտեմբերին փոխ նախագահ Քարլոս Ալվարէսի հրաժարականը, նախագահին՝ երկրէն բացակայելու պարագային պետութեան ղեկավարի պարտականութիւնները կը ստանձնէ ծերակոյտի ժամանակաւոր նախագահը:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԸ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԴԻՄԱԳՐԱԻԷ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայաստանի կեդրոնական դրամատան մէջ 22 Նոյեմբերին նշուեցաւ հայկական դրամի 7րդ տարեդարձը: Դրամը շրջանառութեան մէջ ղրուեցաւ 22 Նոյեմբեր 1993ին, այնպիսի բարձր ժամանակաշրջանի մը մէջ, երբ դրամը էր պատմութեան վերջին օրը: Դրամը ըլլայ անոր ճակատագիրը: Հայաստանի կեդրոնական դրամատան նախագահ Տիգրան Սարգսեան լրագրողներուն հետ ունեցած հանդիպումի մը

ընթացքին, նշեց, որ ներկայիս դրամը յաջողութեամբ դիմագրուած է ախտազերի փորձութիւններ: Ան հաւաստեց, թէ «եօթը տարի ետք աւելի մեծ վստահութեամբ պիտի նայինք մեր ապագային, որովհետեւ վերջին տարիներուն դրամը դրսեւորած վարկերը յոյս կը ներշնչէ, որ Հայաստանի պետականութիւնն ու ֆիւնանսական համակարգը նոյնպէս պիտի ըլլան լրագրողներուն հետ ունեցած հանդիպումի մը

դրամի ճակատագիրին մնայուն կերպով հետամուտ, անոր վերիվայրումները հետեւողականօրէն հաստատող եւ կեդրոնական դրամատան աշխատանքը լաւագոյն ձեւով լուսաբանող լրատու միջոցներուն «Սեւր»-ը: Արժանթինի գործակալութիւններուն եւ տարբեր թերթերու հինգ թղթակիցներուն յանձնուեցան հայոց Արտաշեսեան թագաւորական հարստութեան կանցիւնները:

## ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ԿԵԴՐՈՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԹԱՓԱՒԱՇՐՁԻԿ ԵՐԵՒԱՆԵՐՈՒՆ 60 ԱՌ ՀԱՐԻՐԸ՝ ԵՐԵՒԱՆԵՆ

Հայ օգնութեան հիմնադրամի երեխաներու ընդունման կողմնորոշման կեդրոնին մէջ ներկայիս ապաստանուած են 20 երեխաներ: Կեդրոնը, որ իր գործունէութիւնը սկսած է 9 Փետրուար 2000ին, մինչեւ այսօր ընդունած է 37ն 18 տարեկան 230 մուրացկան, թափառաշրջիկ, անապատաւ մնացած, լքուած եւ ինչամբէ վրկուած երեխաներ: Կեդրոնը միաժամանակ կ'ընայ ապաստան տայ 30 երեխաներու, մէկ ամիս ժամանակով (անհրաժեշտութեան պարագային՝ մէկ ամիսէն աւելի):

Կեդրոնը ընդունածներուն 60 առ հարիւրը Երեւանէն է. երեխաներ կան նաեւ Արտաշատէն, Լեռնային Ղարաբաղէն եւ Ռուսիայէն:

Երեխաներուն 90 առ հարիւրը ներկայացուած է ներքին գործոց նախարարութեան անչափահասներու գործերով բաժանմունքներու աշխատակիցներուն կողմէ, մնացեալները՝ անչափահասներու գործերով համայնքային յանձնախումբերու, կրթութեան եւ գիտութեան նախարարութեան յատուկ դաստիարակութեան վարչութեան եւ ընկերային ապահովութեան նախարարութեան ընտանիքի եւ երեխաներու հիմնադրութեան վարչութեան միջնորդագիրներով: Անոնք գլխաւորաբար ընկերային գետնի վրայ անապատու ընտանիքներէն եւ կեդրոն բերուած են մուրացկանութեամբ եւ թափառաշրջութեամբ վրայելու պատճառով:

Յայտնենք, որ կեդրոնին մէջ կը գործեն բժշկական, հոգեբանական, ուսումնական - կրթական, դաստիարակչական, եւ այլ ծառայութիւններ:

## ԹԱԻՐԻՋԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ՝ ՍԻՆԻՔԻ ՄԷՋ

Իրանի Թաւրիզ քաղաքի նահանգապետարանի պատուիրակութիւնը, առաջին փոխ նահանգապետ Նաճաֆ Ազարիի գլխաւորութեամբ, վերջերս աշխատանքային այցելութիւն մը տուաւ Սինիքի մարզը:

Պատուիրակութեան մաս կը կազմէին Թաւրիզի գործարար շրջանակներու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ՝ Հայաստանի մէջ իրանի դեսպանատան աշխատակիցները:

## «ՎԵԴԻ ԱԼՔՕ»Ի ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՔԻ ՄԷՋ

Հայկական ոգիւնը մայիլներու «Վեդի ալքօ» ընկերութիւնը իր արտադրութեան 15 հազար շիշ պիտի ուղարկէ Իրաքը:

Ընկերութիւնը կը յայտնէ, որ թէեւ Իրաքի մէջ ոգիւնը մայիլներու շատ սահմանափակուած է, սակայն նման ապրանքներու առեւտուրով զբաղուելու իրաւունք ունեցող փոքր ընկերութիւններէն քանի մը հատարար:

## ՅԻՇԵՆՆԵՐ, ՈՐ «ՎԵԴԻ ԱԼՔՕ»Ի ԱՐՏԱԳՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՔԻ ՍԱՊԱՆՈՂՆԵՐԸ ԾԱՆՈՅՑԵԱԾ ԵՆ ՎԵՐՋԵՐ ՊԱՂՏԱՄԻ ՄԷՋ ԿԱԵՂՆԵՐԻ ՄԻՆՈՒՄՆԵՐԸ

Յիշեցնենք, որ «Վեդի ալքօ»-ի արտադրութեան իրաքցի սպառողները ծանօթացած են վերջերս Պաղտամի մէջ կայացած միջազգային տնտեսական համագործակցութեան ընթացքին ուր հայ գինեգործներուն արտադրութիւնները լաւ տպաւորութիւն ձգած են իրաքցիներուն վրայ:

# ՄԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ 300ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ ՁԵՆՆԱՐԿՆԵՐ

## ՅՈՒՅԱՀԱՆԴԵՄ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Միթարեան միաբանութեան հիմնադրման 300ամեակին առիթով 21 Նոյեմբերին Հայաստանի Ազգային գրադարանին մէջ բացուեցաւ ցուցահանդէս մը, ուր ներկայացուեցաւ Վիեննայի եւ Վենետիկի միաբանութիւններուն հրատարակած 300 հատորներ:

Ցուցահանդէսի բացման ներկայ էին Միթարեան Միաբանութեան ներկայացուցիչներ հայր Եղիա վրդ Բիլադպեան եւ Վարդան եպօ. Ազգարեան:

Ցուցահանդէսի բացման ընթացքին հայր Եղիա վրդ Բիլադպեան յայտնեց, որ միաբանութեան 300ամեակին յորելնական ձեռնարկները արտերկրի մէջ արդէն սկսած են:

Ան նշեց, թէ 17 Նոյեմբերին Լիբանանի մէջ կազմակերպուած է յորելնական մեծ համերգ մը՝ Լիբանանի պետական նուագախումբի մասնակցութեամբ, որուն ներկայ եղած են շուրջ 1500 լիբանանահայեր, լիբանանցիներ եւ օտարերկրացիներ, իսկ վերջերս, Վենետիկի մէջ կազմակերպուած էր ցուցահանդէս մը, ուր ներկայացուած էին Միթարեան Միաբանութեան իր յորելնական միաբանութեան աշխատութիւնները:

Այս ցուցահանդէսին ընթացքին յատուկ տեղ զբաւեցրած էին նաեւ Միթարեաններու զոյգ տպարաններուն մէջ վերջին 10 տարիներուն լոյս տեսած աւելի քան 150 անուն հրատարակութիւններ:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՄՈՂՈՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԳԵՄԱՅԻՆ ՄԷՋ

Հայաստանի գիտութիւններու ազգային ակադեմիային մէջ 22 Նոյեմբերին իր աշխատանքներուն սկսաւ «Միթարեաններու դերը հայ հոգեւոր - մշակութային վերածնունդի գործին մէջ» գիտաժողովը, որ նուիրուած էր Միթարեան միաբանութեան երեքսրբաբան իր անդամներին: Գիտաժողովին ներկայ էին պետական բարձրատիճան պաշտօնատարներ, Յովհաննէս - Պօղոս Բ. պապի ներկայացուցիչը, միաբան վարչապետներ եւ օտար հիւրեր:

Գիտաժողովին բացման ներկայ գտնուեցաւ եւ իր հայրապետական պատգամը ուղղեց Ամենայն Հայոց Գաւրեգին Բ. կաթողիկոս: Վեհափառը նշեց հաւատքի եւ այդ հաւատքէն ըխած անմնացող նուիրումի վրայ խորհուած Միթարեաններու դերերու առաքելութիւնը եւ այդ ուղղութեամբ միաբանութեան հիմնադիր Միթարեան Սեբաստացիի աւանդը:

Ապա Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի խորհրդական Ռազմիկ Դաւոյան ընթերցեց նախագահին ուղերձը, որուն մէջ մասնաւորապէս նշած էին Միթարեաններու նուազումները, որոնք հայ իրակառուցութեան անբաժանելի մասը կը կազմեն: Ուղերձին մէջ կ'ըսուի, թէ երբ դարձի վեր շարունակուող ազգանուէր գործունէութեան առաջին իսկ օրէն Միթարեանները եղած են կրթութեան, գիտութեան եւ մշակութի անխնայ նուիրակներ:

Պօք առեւ նաեւ Հայաստանի գիտութիւններու ազգային ակադեմիայի նախագահ Յատէյ Սարգսեան, իսկ Միթարեան միաբանութեան հիմնադիր Միթարեան Սեբաստացիի առաքելութեան անդրադարձաւ ընդհանուր արբահայր Եղիա վրդ. Բիլադպեան:

Գիտաժողովին մասնակցեցեց լսեցին Վարդան եպօ. Ազգարեանի «Միթարեանները իբրեւ մշակութի ջահակիրներ», Յարութիւն վրդ. Պատիկեանի «Միթարեան հայրերու 300ամեայ հոգեմտացական վաստակը» եւ այլ նիւթերով գեկուցումներ, որոնք առիթ ստեղծեցին մանրամասնօրէն վերլուծելու Միթարեաններուն տարած գիտական, կրթական, մշակութային եւ հոգեւոր գործունէութիւնը:

## ՆՈՐ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՀԱՅՈՑ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ»

Վերջերս Երեւանի «Վան Արեան» հրատարակատունը լոյս տեսած է բաճաւէր, լեզուաբան Տիգրան Աւետիսեանի «Հայոց Ազգագնացիքի բառարան» աշխատութիւնը՝ Վանաձորի պետական մեկնակալարժակաւ հիմնարկի գիտական խորհուրդի երաշխաւորութեամբ: Այս աշխատութեան մէջ Տ. Աւետիսեան ուսումնասիրած է հայկական 17,051 մակագնացներ եւ կատարած է անոնց հիմնարկ մանրամասն քննութիւնը: Գիրքի յոռաքաղաքի մէջ (հայերէն, ռուսերէն եւ անգլերէն) հեղինակը կը խոստովանի, թէ երկու գրական հայերէններու եւ աւելի քան 60 բարբառներու առկայութեան պայմաններուն մէջ կարելի չէր թեմա սպասել ձեւով ընդգրկել: Մակագնացներուն որոշ տեսակներ, օրինակ՝ Համբարձումով, Օգանգազմիլի, Մանուկօղլի եւ այլն, բառարանի մէջ տեղ չեն գտած: Իրաքաղաքի մակագնացի կողքին տրուած է անոր անգլերէն եւ ռուսերէն տառադարձութիւնը:

## ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Գորիսի մերձակայքը՝ սարերուն լանջին գտնուող Քարահունջ գիւղին բնակիչները որոշած են վերականգնել շրջանի եկեղեցին, որ կառուցուած է 17րդ դարու կէսերուն եւ այժմ կը գտնուի կիսաւեր վիճակի մէջ:

